Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-784-13.05.2015,09.06.2015-ՍՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 9-ի աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 4-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) «ակտերով» բառից հետո լրացնել «, աշխատանքային» բառը.

2) 3-րդ կետի «պարտականությունների» բառը փոխարինել «պարտավորությունների» բառով:

Հոդված 2. Օրենսգրքի 5-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասը «Աշխատանքի ընդունման» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև աշխատանքային պայմանագիրը լուծելու» բառերով.

2) 5-րդ մասը «պահպանվում» բառից հետո լրացնել «, հաշվառվում» բառով:

Հոդված 3. Օրենսգրքի 14-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից հանել «կողմերի համաձայնությամբ՝» բառերը.

2) 2-րդ մասից հանել «նաև» բառը:

Հոդված 4. Օրենսգրքի 17-րդ հոդվածում՝

1) 2.1-ին մասում «101-րդ հոդվածին, 140-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, 155-րդ հոդվածին» բառերը փոխարինել «89-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերին, 91-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետին, 101-րդ հոդվածին, 140-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին, 143-րդ հոդվածի 1.1-ին մասին, 148-րդ հոդվածի 3-րդ մասին, 149-րդ հոդվածի 4-րդ մասին, 153-րդ հոդվածի 2-րդ մասին, 154-րդ հոդվածի 2-րդ մասին, 155-րդ հոդվածի 7-րդ մասին, 164-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետին, 209-րդ հոդվածի 3-րդ մասին, 240-րդ հոդվածի 2-րդ մասին, 249-րդ հոդվածի 1-ին մասին, 257-րդ հոդվածին» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.2-րդ մասով.

«2.2. Սույն օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերի, 91-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, 101-րդ հոդվածի, 140-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերի, 143-րդ հոդվածի 1.1-ին մասի, 148-րդ հոդվածի 3-րդ մասի, 149-րդ հոդվածի 4-րդ մասի, 153-րդ հոդվածի 2-րդ մասի, 155-րդ հոդվածի 7-րդ մասի, 164-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի, 209-րդ հոդվածի 3-րդ մասի, 249-րդ հոդվածի 1-ին մասի և 257-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ մինչև տասնչորս տարեկան անձինք կարող են ընդգրկվել կինեմատոգրաֆիայի, սպորտային, թատերական և համերգային կազմակերպություններում, կրկեսում, հեռուստատեսությունում և ռադիոյում ստեղծագործությունների ստեղծմանը (ստեղծագործական աշխատանք) և (կամ) կատարմանը՝ ծնողներից մեկի կամ որդեգրողի կամ խնամակալի կամ խնամակալության և հոգաբարձության մարմնի գրավոր համաձայնության դեպքում, ինչը չպետք է վնասի նրանց առողջությանն ու բարոյականությանը, ինչպես նաև չպետք է խոչընդոտի կրթությանն ու անվտանգությանը:»:

3) 4-րդ մասից հանել «Տասնչորսից» բառը:

Հոդված 5. Օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «կատարվել է որոշակի» բառերը փոխարինել «կատարվել է քաղաքացու կրթության կամ անհրաժեշտ որակավորման մասին վկայականում նշված» բառերով:

Հոդված 6. Օրենսգրքի 84-րդ հոդվածում՝

1) վերնագրում «իրավական ակտի» բառերից հետո լրացնել «, աշխատանքային պայմանագրի» բառերով.

2) 1-ին մասում «իրավական ակտում» բառերից հետո լրացնել «, աշխատանքային պայմանագրում» բառերով.

3) 1-ին մասի՝

ա. 1-ին կետը «ընդունելու» բառից հետո լրացնել «, աշխատանքային պայմանագիրը կնքելու» բառերով.

բ. 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9) անհատական իրավական ակտի կամ աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը (անհրաժեշտության դեպքում).».

գ. 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10) փորձաշրջան սահմանելու դեպքում՝ փորձաշրջանի տևողությունը և պայմանները.».

դ. 11-րդ կետը շարադրել հետևյալ խմագրությամբ.

«11) աշխատաժամանակի ռեժիմը՝ աշխատաժամանակի նորմալ տևողություն կամ ոչ լրիվ աշխատաժամանակ կամ աշխատաժամանակի կրճատ տևողություն կամ աշխատաժամանակի գումարային հաշվարկ.»

ե. 12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12) ամենամյա արձակուրդի տեսակը (նվազագույն, լրացուցիչ, երկարացված) և տևողությունը».

4) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել.

5) 3-րդ մասում «և» բառը փոխարինել «կամ» բառով:

Հոդված 7. Օրենսգրքի 85-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«1. Գրավոր աշխատանքային պայմանագիրը կնքվում է երկու օրինակից՝ կողմերի, իսկ մինչև տասնչորս տարեկան աշխատողների հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի դեպքում՝ ծնողներից մեկի կամ որդեգրողի կամ խնամակալի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, որի մեկ օրինակը գործատուն հանձնում է աշխատողին, իսկ մինչև տասնչորս տարեկան անձի մասնակցությամբ աշխատանքային հարաբերությունների ծագման դեպքում՝ ծնողներից մեկին կամ որդեգրողին կամ խնամակալին:

Աշխատանքային պայմանագիրը կարող է կնքվել նաև կողմերի էլեկտրոնային ստորագրությամբ: Էլեկտրոնային ստորագրությամբ կնքված աշխատանքային պայմանագրի մեկ օրինակը էլեկտրոնային եղանակով փոխանցվում է աշխատողին, իսկ մինչև տասնչորս տարեկան անձի մասնակցությամբ աշխատանքային հարաբերությունների ծագման դեպքում՝ ծնողներից մեկին կամ որդեգրողին կամ խնամակալին:»:

Հոդված 8. Օրենսգրքի 89-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 2-րդ կետից հանել «աշխատանքային գրքույկ (բացառությամբ առաջին անգամ կամ համատեղությամբ աշխատանքի ընդունվողների) և» բառերը, իսկ «տեղեկանք» բառից հետո լրացնել «կամ հանրային ծառայության համարանիշ կամ հանրային ծառայության համարանիշ չունենալու մասին տեղեկանք» բառերով.

2) 1-ին մասի 5-րդ կետում «հոգաբարձուի» բառից հետո լրացնել «կամ խնամակալի» բառերը, իսկ «տասնչորսից» բառը հանել.

3) լրացնել նոր 1.1-րդ և 1.2-րդ մասերով հետևյալ բովանդակություններով.

«1.1. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը լուսապատճենահանվում և հետ են վերադարձվում, իսկ 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը պահպանվում են գործատուի մոտ:

1.2. Անհրաժեշտության դեպքում գործատուի և աշխատողի համաձայնությամբ աշխատողը կարող է ներկայացնել անհատական (անձնավորված) հաշվառման համակարգի տեղեկատվական բազայում առկա տվյալները ներառող տեղեկանք իր նախկին աշխատանքային գործունեության վերաբերյալ:»:

Հոդված 9. Օրենսգրքի 90-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 10. Օրենսգրքի 91-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետում «հանձնած» բառից հետո լրացնել «կամ գործատուի մոտ կամ գործատուի նախաձեռնությամբ այլ վայրում ուսուցում անցած» բառերը:

Հոդված 11. Օրենսգրքի 93-րդ հոդվածի 3-րդ մասը «փորձաշրջան անցած,» բառերից հետո լրացնել «կնքված աշխատանքային պայմանագրի գործողությունը շարունակվում է» բառերով, իսկ «15-րդ գլխով նախատեսված հիմքերով» բառերը փոխարինել «109-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերով» բառերով:

Հոդված 12. Օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «նշված է:» բառերից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Աշխատանքային պայմանագիրը կնքվում է անորոշ ժամկետով, բացառությամբ սույն օրենսգրքի 95-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:»:

Հոդված 13. Օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ կետով.

«7) *տարիքային կենսաթոշակի իրավունք ունեցող և վաթսուներեք տարին լրացած կամ տարիքային կենսաթոշակի իրավունք չունեցող և վաթսունհինգ տարին լրացած անձանց հետ՝* գործատուի կողմից առաջարկվող պաշտոնում կամ աշխատանքում անձի մասնագիտական ունակությունների գնահատման հիման վրա:»:

Հոդված 14. Օրենսգրքի 99-րդ հոդվածի 1-ին մասում «աշխատանքային ժամանակից դուրս» բառերը փոխարինել «աշխատանքից ազատ ժամանակ» բառերով:

Հոդված 15. Օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Անօրինական է համարվում այն աշխատանքը, որն իրականացվում է առանց աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրի կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի:»:

Հոդված 16. Օրենսգրքի 105-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«2. Աշխատանքի էական պայմաններ են աշխատանքի վայրը, աշխատանքի վարձատրության չափը և (կամ) այն որոշելու ձևը, արտոնությունները, աշխատաժամանակի (աշխատանքի և հանգստի) ռեժիմը, տարակարգերը և պաշտոնների անվանումները, աշխատանքային պայմանագրի տեսակը, որոնց և (կամ) գործատուի փոփոխման դեպքում գործատուն աշխատողին պետք է ծանուցի սույն օրենսգրքի 115-րդ հոդվածով սահմանված ժամկետներում, բացառությամբ հետևյալ դեպքերի՝

1) հիմնական աշխատավարձի չափի և (կամ) հավելումների, հավելավճարների բարձրացման դեպքում, երբ մյուս պայմանները պահպանվում են.
2) օրական և (կամ) շաբաթական աշխատաժամանակի կրճատման դեպքում, երբ մյուս պայմանները պահպանվում են:».

2) 3-րդ մասում «պայմանները» բառը փոխարինել «չափը և (կամ) այն որոշելու ձևը» բառերով, իսկ «դեպքում» բառից հետո լրացնել «, որի մասին գործատուն գրավոր ձևով պետք է ծանուցի աշխատողին ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ՝ մինչև նոր պայմանների ուժի մեջ մտնելը».

3) 5-րդ մասում «համաձայն չէ աշխատանքը շարունակել նոր պայմաններում» բառերը փոխարինել «չի տվել իր գրավոր համաձայնությունը աշխատանքը նոր պայմաններում շարունակելու համար» բառերով:

Հոդված 17. Օրենսգրքի 106-րդ հոդվածի 1-ին մասում «ունի» բառից հետո լրացնել «անհատական իրավական ակտի հիման վրա» բառերը, իսկ «, ինչպես նաև» բառերը փոխարինել «և (կամ) նույն ժամկետով» բառերով:

Հոդված 18. Օրենսգրքի 109-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 8-րդ կետում «հոգաբարձուն» բառից հետո լրացնել «կամ խնամակալը» բառերը.

2) 1-ին մասի 12-րդ կետում «89-րդ հոդվածի» բառերից հետո լրացնել «1-ին մասի» բառերը.

3) 2-րդ մասը «ակտով» բառից հետո լրացնել «՝ բացառությամբ սույն օրենսգրքի 128-րդ հոդվածով նախատեսված դեպքի» բառերով:

Հոդված 19. Օրենսգրքի 113-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի՝

ա. 1-ին կետը «դադարման» բառից հետո լրացնել «և օրենքով նախատեսված դեպքերում պետական գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու» բառերով.

բ. 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11) *տարիքային կենսաթոշակի իրավունք ունեցող աշխատողի վաթսուներեք տարին, իսկ տարիքային կենսաթոշակի իրավունք չունեցող աշխատողի վաթսունհինգ տարին* լրանալու դեպքում, եթե համապատասխան հիմքը նախատեսված է աշխատանքային պայմանագրով:».

2) 2-րդ մասում «115-րդ հոդվածով» բառերը փոխարինել «115-րդ հոդվածի 1-ին մասով» բառերով:

Հոդված 20. Օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 2.2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.2) երեխային փաստացի խնամող արձակուրդում չգտնվող անձի՝ մինչև մեկ տարեկան երեխա խնամելու ամբողջ ժամանակահատվածում, բացառությամբ սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերով նախատեսված դեպքերի.»:

Հոդված 21. Օրենսգրքի 115-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 2-րդ պարբերությունից հանել «109-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով և» բառերը, իսկ «լուծելու» բառից հետո լրացնել «, ինչպես նաև սույն օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված» բառերով, իսկ «դեպքում» բառը փոխարինել «դեպքերում» բառով.

2) 2-րդ մասը «1-ին մասով» բառից հետո լրացնել «, ինչպես նաև սույն օրենսգրքի 93-րդ հոդվածի 1-ին և 111-րդ հոդվածի 2-րդ մասերով» բառերով.

3) 3-րդ մասի 1-ին կետի «պատճառը» բառից հետո լրացնել «, իսկ աշխատողին այլ աշխատանք առաջարկելու դեպքում՝ նաև պաշտոնի անվանումը, աշխատավարձի չափը կամ այլ աշխատանք առաջարկելու հնարավորության բացակայության մասին» բառերով:

Հոդված 22. Օրենսգրքի 116-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 1-ին պարբերության առաջին անգամ նշված «թվաքանակի» բառից հետո լրացնել «և (կամ) հաստիքների» բառերով, «երեք ամիս» բառերը փոխարինել «երկու ամիս» բառերով, իսկ «Հայաստանի Հանրապետության զբաղվածության պետական ծառայություն» բառերը փոխարինել «զբաղվածության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին» բառերով.

2) 2-րդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 23. Օրենսգրքի 120-րդ հոդվածի 1-ին մասում «գիտելիքների» բառը փոխարինել «ունակությունների» բառով:

Հոդված 24. Օրենսգրքի 121-րդ հոդվածի 1-ին մասում «եթե» բառից հետո լրացնել «մինչև տվյալ աշխատանքային կարգապահական խախտումը» բառերով:

Հոդված 25. Օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 1-ին պարբերության «ծառայության ամբողջ ժամանակահատվածով դադարեցնում է աշխատանքային հարաբերությունները աշխատողի հետ և» բառերը հանել.

2) 2-րդ պարբերության «աշխատանքային հարաբերությունները վերականգնելու և» բառերը հանել, «որի» բառից հետո լրացնել «էական» բառով, իսկ «նախորդ» բառը փոխարինել «մինչև պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելը գործող աշխատանքային» բառերով:

Հոդված 26. Օրենսգրքի 128-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 128. Աշխատանքային պայմանագրի լուծումը ֆիզիկական անձ գործատուի մահվան դեպքում

1. Ֆիզիկական անձ գործատուի մահվան դեպքում աշխատանքային պայմանագիրը աշխատողը կարող է միակողմանիորեն լուծել գործատուի մահվան օրվանից՝ մահվան փաստը գրանցող լիազոր մարմնի տրամադրած փաստաթղթի հիման վրա:

2. Եթե աշխատողը չի լուծում աշխատանքային պայմանագիրը սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքում, ապա Ֆիզիկական անձ գործատուի մահվան օրվանից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում նրա հետ կարող է աշխատանքային հարաբերությունները շարունակվել՝ օրենքով սահմանված կարգով Ֆիզիկական անձ գործատուի գույքի հավատարմագրային կառավարիչ հանդիսացող անձի հետ, որն այս դեպքում դառնում է գործատու՝ աշխատանքային պայմանագրում գործատուի փոփոխմամբ:

3. Եթե չեն շարունակվում աշխատանքային հարաբերությունները սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում, ապա աշխատանքային պայմանագիրը համարվում է լուծված Ֆիզիկական անձ գործատուի մահվան օրվանից՝ մահվան փաստը գրանցող լիազոր մարմնի տրամադրած փաստաթղթի հիման վրա:»:

Հոդված 27. Օրենսգրքի 129-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) «իսկ 113-րդ հոդվածի» բառերից հետո լրացնել «1-ին մասի» բառերով.

2) 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) մինչև մեկ տարի աշխատելու դեպքում՝ միջին օրական աշխատավարձի տասնապատիկի չափով.

2) մեկից մինչև հինգ տարի աշխատելու դեպքում՝ միջին օրական աշխատավարձի քսանհինգապատիկի չափով.

3) հինգից մինչև տաս տարի աշխատելու դեպքում՝ միջին օրական աշխատավարձի երեսունապատիկի չափով.

4) տասից մինչև տասնհինգ տարի աշխատելու դեպքում՝ միջին օրական աշխատավարձի երեսունհինգապատիկի չափով.

5) տասնհինգ տարի և ավելի աշխատելու դեպքում՝ միջին օրական աշխատավարձի քառասունչորսապատիկի չափով:».

3) 2-րդ մասի «ժամանակահատվածով» բառից հետո լրացնել «և (կամ) ավելի մեծ չափով» բառերով:

Հոդված 28. Օրենսգրքի 130-րդ հոդվածի՝

1) 1.1-ին մասը «գործատուի» բառից հետո լրացնել «կամ օրենքով սահմանված կարգով իրավահաջորդ ճանաչված գործատուի» բառերով.

2) 2-րդ մասը «սահմանված կարգով լրացնել աշխատողի աշխատանքային գրքույկն ու հանձնել նրան» բառերը փոխարինել «իսկ եթե այդ պարտավորությունը, գործատուից անկախ պատճառներով հնարավոր չէ կատարել, ապա աշխատողի աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները կատարվում են աշխատողի կողմից նման պահանջ ներկայացնելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում» բառերով:

Հոդված 29. Օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Աշխատաժամանակի կրճատ տևողություն սահմանվում է՝

1) մինչև յոթ տարեկան երեխաների համար օրական մինչև երկու ժամ, սակայն շաբաթվա ընթացքում ոչ ավել քան չորս ժամ.

2) յոթից մինչև տասներկու տարեկան երեխաների համար օրական մինչև երեք ժամ, սակայն շաբաթվա ընթացքում ոչ ավել քան վեց ժամ.

3) տասներկուսից մինչև տասնչորս տարեկան երեխաների համար օրական մինչև չորս ժամ, սակայն շաբաթվա ընթացքում ոչ ավել քան տասներկու ժամ.

4) տասնչորսից մինչև տասնվեց տարեկան աշխատողների համար՝ շաբաթական մինչև 24 ժամ.

5) տասնվեցից մինչև տասնութ տարեկանների համար՝ շաբաթական մինչև 36 ժամ.

6) այն աշխատողների համար, որոնց աշխատավայրում վնասակար գործոնների սահմանային թույլատրելի մակարդակը տեխնիկական կամ այլ պատճառներով հնարավոր չէ իջեցնել աշխատողների առողջության և անվտանգության մասին իրավական ակտերով սահմանված առողջության համար անվտանգ մակարդակի, աշխատաժամանակը սահմանվում է ոչ ավելի, քան շաբաթական 36 ժամ:»:

Հոդված 30. Օրենսգրքի 142-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «կամ նրա ներկայացուցիչը» բառերը հանել.

2) 3-րդ մասի «երկու ամիս» բառերը փոխարինել «մեկ շաբաթ» բառերով.

3) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Գործատուն պարտավոր է ստույգ հաշվառել յուրաքանչյուր աշխատողի օրական և (կամ) շաբաթական աշխատաժամանակը, ըստ որի՝ կապահովվի այն տեղեկատվությունը, որով հնարավոր կլինի պարզել սույն օրենսգրքի 17-րդ գլխով սահմանված նորմերի պահանջների կատարումը:»:

Հոդված 31. Օրենսգրքի 143-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը «ժամանակահատվածի տևողությունը» բառերից հետո լրացնել «յուրաքանչյուր դեպքում» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.

«1.1. Աշխատաժամանակի գումարային հաշվարկի կիրառումը արգելվում է մինչև 18 տարեկան աշխատողների նկատմամբ:»:

Հոդված 32. Օրենսգրքի 144-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Արտաժամյա աշխատանքը սույն օրենսգրքի 139-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ կամ 4-րդ մասերով կամ 140-րդ կամ 141-րդ հոդվածներով կամ 142-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով կամ 7-րդ մասով կամ 147-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված աշխատաժամանակից ավելի տևողությամբ աշխատանքն է:»:

Հոդված 33. Օրենսգրքի 146-րդ հոդվածի 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 34. Օրենսգրքի 148-րդ հոդվածի 4-րդ մասը «համաձայնությամբ» բառից հետո լրացնել «՝ նախնական բժշկական զննություն անցնելուց և գործատուին բժշկական եզրակացություն ներկայացնելուց հետո» բառերով:

Հոդված 35. Օրենսգրքի 149-րդ հոդվածում 2-րդ մասի «139-րդ հոդվածով» բառերը փոխարինել «139-րդ հոդվածի 2-րդ մասով» բառերով:

Հոդված 36. Օրենգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասում «14» թիվը փոխարինել «16» թվով:

Հոդված 37. Օրենսգրքի 159-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Ոչ լրիվ աշխատաժամանակով, ինչպես նաև սույն օրենսգրքի 139-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված առանձին կատեգորիայի աշխատողների ամենամյա արձակուրդը չի կրճատվում և դրա տևողությունը որոշվում է յուրաքանչյուր օրացուցային շաբաթը համապատասխանաբար հաշվարկելով հինգ աշխատանքային օր՝ հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում, և վեց աշխատանքային օր՝ վեցօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում:»:

Հոդված 38. Օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասում «կարող է տրամադրվել» բառերը փոխարինել «տրամադրվում է» բառերով:

Հոդված 39. Օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի «դրա հետ» բառերը փոխարինել «միասին» բառով:

Հոդված 40. Օրենսգրքի 164-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «տվյալ» բառից հետո լրացնել «աշխատանքային» բառով, իսկ «տարում:» բառից հետո լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ.

«Աշխատանքային տարին օրացուցային օրերով հաշվարկվող ժամանակահատված է, որը սկսվում է աշխատողի հետ աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով նախատեսված օրն աշխատանքի անցնելու օրվանից և ավարտվում է հաջորդ օրացուցային տարվա համապատասխան ամսին և ամսաթվին:».

2) 2-րդ մասում «հետո» բառից հետո լրացնել «, բացառությամբ համատեղությամբ աշխատողների» բառերով:

Հոդված 41. Օրենսգրքի 167-րդ հոդվածի 2-րդ մասում «աշխատողի և գործատուի համաձայնությամբ» բառերը հանել:

Հոդված 42. Օրենսգրքի 168-րդ հոդվածում՝

1) «109-րդ հոդվածի» բառերից հետո լրացնել «1-ին մասի» բառերով.

2) «7-րդ,» բառից հետո լրացնել «11-րդ,» բառով:

Հոդված 43. Օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ մասում «առաջ» բառից հետո լրացնել «, իսկ, եթե դա հնարավոր չէ գործատուից անկախ պատճառներով, ապա ամենամյա արձակուրդը սկսելու աշխատողի դիմումում նշված ժամկետից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում» բառերով:

Հոդված 44. Օրենսգրքի 170-րդ հոդվածում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մաս.

«1.1. Սույն օրենսգրքի 100-րդ կամ 101-րդ հոդվածներով սահմանված ժամկետներով կնքված, ինչպես նաև մինչև վեց ամիս աշխատած աշխատողների հետ աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում գործատուն չօգտագործված ամենամյա արձակուրդի համար աշխատողին վճարում է դրամական հատուցում՝ սույն հոդվածի 2-րդ մասին համապատասխան:».

2) 2-րդ մասի վերջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հատուցումը վճարվում է չօգտագործված բոլոր արձակուրդների համար:»:

Հոդված 45. Օրենսգրքի 178-րդ հոդվածի 5-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 46. Օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասում «չեն ներառվում» բառերից հետո լրացնել «հարկերը, նպատակային սոցիալական վճարները» բառով:

Հոդված 47. Օրենսգրքի 183-րդ հոդվածի 2-րդ մասում՝

1) «, պաշտոնների և ցուցանիշների ցուցակով» բառերը փոխարինել «և պաշտոնների ցանկով» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Սույն մասով նախատեսված ցանկերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 48. Օրենսգրքի 192-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունում «Աշխատավարձը» բառից հետո լրացնել «վճարվում է Հայաստանի Հանրապետության արժույթով և» բառերով, իսկ «վճարվել» բառից հետո լրացնել «կանխիկ կամ անկանխիկ՝» բառերը:

Հոդված 49. Օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասում «բոլոր աշխատողներին» բառերը հանել, իսկ «պետք է ներկայացնի բառերը» փոխարինել «աշխատողի պահանջով ներկայացնում է» բառերով:

Հոդված 50. Օրենսգրքի 194-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 51. Օրենսգրքի 195-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 3-րդ պարբերությունը «ձևավորվում» բառից հետո լրացնել «կամ միջին ամսական աշխատավարձը հաշվարկելու պահանջն առաջացել է մինչև աշխատողի առաջին աշխատանքային տարին լրանալը» բառերով.

2) 4-րդ մասի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Միջին ժամային աշխատավարձի չափը որոշվում է՝ միջին ամսական աշխատավարձի և միջին ամսական աշխատավարձը հաշվարկելու համար հաշվառված ամիսների արտադրյալը բաժանելով միջին ամսական աշխատավարձը հաշվարկելու համար հաշվառված ամիսների ընթացքում տվյալ աշխատողի փաստացի աշխատած ժամերի քանակին:»:

Հոդված 52. Օրենսգրքի 201.1-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 201.1. Գործատուի կողմից մասնագիտական ուսուցումը

Գործատուն իր միջոցների հաշվին իրավունք ունի կազմակերպությունում *կամ այլ վայրում* պայմանագրային հիմունքներով կազմակերպել աշակերտների կամ աշխատանքի ընդունվող անձի մասնագիտական ուսուցում՝ մինչև վեց ամիս տևողությամբ, ուսուցման ընթացքում աշակերտին վճարելով կրթաթոշակ՝ առնվազն օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափով:»:

Հոդված 53. Օրենսգրքի 214-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Սույն օրենսգրքի 213-րդ հոդվածով սահմանված պահումներն ու գանձումները կատարելուց հետո՝ աշխատողին վճարվող աշխատավարձը չի կարող պակաս լինել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի չափից, բացառությամբ սույն օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված դեպքերի:»:

Հոդված 54. Օրենսգրքի 217-րդ հոդվածի 4-րդ կետի «անվտանգ» բառից հետո լրացնել «և առողջության համար անվնաս» բառերը:

Հոդված 55. Օրենսգրքի 228-րդ հոդվածում «կարգով» բառից հետո լրացնել «՝ տվյալ կարգապահական տույժը կիրառելու մասին իրավական ակտն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում» բառերը:

Հոդված 56. Օրենսգրքի 263-րդ հոդվածում «աշխատողի» բառից հետո լրացնել «կամ տվյալ գործատուի հետ նախկինում աշխատանքային հարաբերությունների մեջ գտնված աշխատողի» բառերով, իսկ «առաջանում է» բառերից հետո լրացնել «կամ առաջացել է» բառերով:

Հոդված 57. Անցումային դրույթներ

1. Աշխատանքային գրքույկների ներկայացման պարտադիր պահանջը դադարեցվում է *2017 թվականի հունվարի 1-ից հետո* աշխատանքի ընդունվողների մասով:

2. *Հիմնական աշխատավայրի գործատուն պարտավոր է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով 2017 թվականի հունվարի 1-ից հետո երկու տարվա ընթացքում իր մոտ վարվող աշխատանքային գրքույկները՝*

1) ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին՝ աշխատանքային գրքույկում առկա տեղեկատվությունը պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարան ներառելու նպատակով.

2) հանձնել աշխատողներին՝ աշխատանքային գրքույկում լրացնելով հանձնելու տարին, ամիսը, ամսաթիվը, ինչպես նաև աշխատողի պահանջով՝ աշխատանքային պայմանագրի լուծման հիմքը, զբաղեցրած պաշտոնի կամ կատարած աշխատանքի մասին տեղեկությունները, համատեղության կարգով աշխատելու ժամանակահատվածը, եթե աշխատողը գործատուին է ներկայացնում համատեղությամբ աշխատանքը հաստատող փաստաթուղթ:

3. Եթե աշխատանքային պայմանագիրը լուծվում է մինչև սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով աշխատանքային գրքույկի հանձնումը, ապա հիմնական աշխատավայրի գործատուն սույն օրենսգրքի 130-րդ հոդվածով սահմանված կարգով աշխատողի հետ վերջնահաշվարկի հետ միասին աշխատողի աշխատանքային գրքույկը հանձնում է աշխատողին՝ սույն հոդվածի 2-րդ մասին համապատասխան:

Հոդված 58. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից երեք ամիս հետո, բացառությամբ 9-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

Ամփոփաթերթիկ
ՀՀ Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի կապակցությամբ առաջարկությունների

Առաջարկության հեղինակ	Հոդված	Բովանդակություն	Եզրակացություն
ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ /024 ընտրատարածք/ Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ /077 ընտրատարածք/ Վ.ՄԱՐԿՈՍՅԱՆ /014 ընտրատարածք/ Ռ.ՀՈՎՍԵՓՅԱՆ /006 ընտրատարածք/	1. «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 8-րդ հոդված	1. Առաջարկում ենք Նախագծի 8-րդ հոդվածով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 89-րդ հոդվածը 1.2-րդ մասով լրացնելու առաջարկությունը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «1.2. Անհրաժեշտության դեպքում գործատուի և աշխատողի համաձայնությամբ աշխատողը կարող է ներկայացնել սոցիալական ծառայությունների կողմից տրված տեղեկանք՝ իր նախկին աշխատանքային գործունեության վերաբերյալ:»:	1. Առաջարկությունը բովանդակային առումով ընդունելի է և կիրացվի ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված անհատական (անձնավորված) հաշվառման համակարգի տեղեկատվական բազայի վարման կարգում՝ Նախագծի համապատասխան փոփոխությունների շրջանակներում:
ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ /024 ընտրատարածք/ Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ /077 ընտրատարածք/ Վ.ՄԱՐԿՈՍՅԱՆ /014 ընտրատարածք/ Ռ.ՀՈՎՍԵՓՅԱՆ /006 ընտրատարածք/	2.Նախագծի 13-րդ հոդված	2. Առաջարկում ենք Նախագծի 13-րդ հոդվածում «վաթսունհինգ» բառից առաջ լրացնել «տարիքային կենսաթոշակի իրավունք ունեցող և վաթսուներեք տարին լրացած կամ տարիքային կենսաթոշակի իրավունք չունեցող և» բառերը:	2. Առաջարկությունն ընդունվել է և Նախագծի 13-րդ հոդվածը խմբագրվել է:
ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ /024 ընտրատարածք/ Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ /077 ընտրատարածք/ Վ.ՄԱՐԿՈՍՅԱՆ /014 ընտրատարածք/ Ռ.ՀՈՎՍԵՓՅԱՆ /006 ընտրատարածք/	3. Նախագծի 19-րդ հոդված	3. Առաջարկում ենք Նախագծի 19-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետում «վաթսունհինգ» բառից առաջ լրացնել «տարիքային կենսաթոշակի իրավունք ունեցող աշխատողի վաթսուներեք տարին, իսկ տարիքային կենսաթոշակի իրավունք չունեցող աշխատողի» բառերը:	3. Առաջարկությունն ընդունվել է և Նախագծի 19-րդ հոդվածում կատարվել է առաջարկված լրացումը:
ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ /024 ընտրատարածք/	4. Նախագծի 52-րդ հոդված	4. Առաջարկում ենք Նախագծի 52-րդ հոդվածում «կազմակերպությունում» բառից	4. Առաջարկությունն ընդունվել է: Նախագծի 52-րդ հոդվածում

Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ /077 ընտրատարածք/ Վ.ՄԱՐԿՈՍՅԱՆ /014 ընտրատարածք/ Ռ.ՀՈՎՍԵՓՅԱՆ /006 ընտրատարածք/		հետո լրացնել «կամ կազմակերպությունից դուրս՝ բառերը:	կատարվել է առաջարկված լրացումը՝ նախատեսելով գործատուի միջոցների հաշվին ինչպես կազմակերպությունում, այնպես էլ այլ վայրում պայմանագրային հիմունքներով կազմակերպելու աշակերտների կամ աշխատանքի ընդունվող անձի մասնագիտական ուսուցում:
ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ /024 ընտրատարածք/ Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ /077 ընտրատարածք/ Վ.ՄԱՐԿՈՍՅԱՆ /014 ընտրատարածք/ Ռ.ՀՈՎՍԵՓՅԱՆ /006 ընտրատարածք/	5. Նախագծի 57-րդ հոդված	5. Առաջարկում ենք Նախագծի 57-րդ հոդվածը խմբագրել հետևյալ բովանդակությամբ. «Հոդված 57. Անցումային դրույթներ 1. Աշխատանքային գրքույկների ներկայացման պարտադիր պահանջը դադարեցվում է 2017 թվականի հունվարի 1-ից հետո աշխատանքի ընդունվողների մասով: 2. Հիմնական աշխատավայրի գործատուն պարտավոր է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով 2017 թվականի հունվարի 1-ից հետո երկու տարվա ընթացքում իր մոտ վարվող աշխատանքային գրքույկները՝ 1) ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին՝ աշխատանքային գրքույկում առկա տեղեկատվությունը պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարան ներառելու նպատակով. 2) հանձնել աշխատողներին՝ աշխատանքային գրքույկում լրացնելով	5. Առաջարկությունն ընդունվել է և Նախագծի 57-րդ հոդվածը խմբագրվել է առաջարկությանը համապատասխան:

		հանձնելու տարին, ամիսը, ամսաթիվը, ինչպես նաև աշխատողի պահանջով՝ աշխատանքային պայմանագրի լուծման հիմքը, գբաղեցրած պաշտոնի կամ կատարած աշխատանքի մասին տեղեկությունները, համատեղության կարգով աշխատելու ժամանակահատվածը, եթե աշխատողը գործատուին է ներկայացնում համատեղությամբ աշխատանքը հաստատող փաստաթուղթ: 3. Եթե աշխատանքային պայմանագիրը լուծվում է մինչև սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով աշխատանքային գրքույկի հանձնումը, ապա հիմնական աշխատավայրի գործատուն սույն օրենսգրքի 130-րդ հոդվածով սահմանված կարգով աշխատողի հետ վերջնահաշվարկի հետ միասին աշխատողի աշխատանքային գրքույկը հանձնում է աշխատողին՝ սույն հոդվածի 2-րդ մասին համապատասխան:	
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՀԱԿՅԱՆ /047 ընտրատարածք/	1. Նախագծի 15-րդ հոդված	1. Նախագծի 15-րդ հոդվածով ՀՀ աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 102-րդ հոդվածում առաջարկվող լրացումների շրջանակներում առաջարկում եմ Օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Անօրինական է համարվում այն աշխատանքը, որն իրականացվում է առանց աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված	1. Առաջարկությունն ընդունվել է և Նախագծի 15-րդ հոդվածը խմբագրվել է առաջարկությանը համապատասխան:

		գրավոր աշխատանքային պայմանագրի կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի։»:	
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՀԱԿՅԱՆ /047 ընտրատարածք/	2. Նախագծի 19-րդ հոդված	2. Նախագծի 19-րդ հոդվածով առաջարկվող՝ Օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը ներկայիս խմբագրմամբ պահպանելու կամ սահմանված տարիքը 63-ով փոխարինելու առաջարկի ընդունման դեպքում անհրաժեշտություն կառաջանա փոփոխություններ կատարել նաև մի շարք այլ օրենքներում որտեղ աշխատողի առավելագույն տարիքը սահանված է 65 (օրինակ՝ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք և այն): Միաժամանակ, կարծում ենք, որ դա կհակասի ՀՀ Սահմանադրությանը 96-րդ հոդվածին, որի համաձայն՝ «Դատավորը և սահմանադրական դատարանի անդամն անփոփոխելի են: Դատավորը պաշտոնավարում է մինչև իր 65 տարին, իսկ սահմանադրական դատարանի անդամը՝ 70 տարին լրանալը: Ուստի առաջարկվում է 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «11) վաթսունհինգ տարին լրանալու դեպքում, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ և համապատասխան հիմքն առկա է աշխատանքային պայմանագրում կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական	2. Չի ընդունվել: Օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ քաղաքական, հայեցողական կամ քաղաքացիական պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև քաղաքացիական, օրենքով սահմանված այլ պետական (հատուկ) ծառայությունների և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի աշխատողների աշխատանքային (ծառայողական) հարաբերությունները կարգավորվում են Օրենսգրքով, եթե համապատասխան օրենքներով այլ բան նախատեսված չէ: Մյուս կողմից, Օրենսգրքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավական կարգավորումների առումով հավասարեցված են գրավոր աշխատանքային պայմանագրի և աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի հիման վրա ծագած

		ակտում:»:	աշխատանքային հարաբերությունները:
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՀԱԿՅԱՆ /047 ընտրատարածք/	3. Նախագծի 27-րդ հոդված	3. Նախագծի 27-րդ հոդվածով խմբագրվող՝ Օրենսգրքի 129-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «քառասունչորսապատիկ» բառը փոխարինել «քառասունհինգապատիկ» բառով:	3. Չի ընդունվել: Օրենսգրքի 115-րդ հոդվածով աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցման ժամկետները, ինչպես նաև 129-րդ հոդվածով արձակման նպաստի չափերը սահմանվել են հիմք ընդունելով՝ 1) Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի մասին Հայաստանի զեկույցի վերաբերյալ Սոցիալական իրավունքների եվրոպական հանձնաժողովի 2007 թվականի եզրակացություններում բերված՝ խարտիայի 4-րդ հոդվածի 4-րդ պարբերությանը Օրենսգրքի 129-րդ հոդվածի համապատասխանեցման վերաբերյալ հանձնաժողովի կողմից երաշխավորված ժամկետներն ու չափերը: 2) Սոցիալական իրավունքների եվրոպական հանձնաժողովի նախադեպային իրավունքի վերլուծական ամփոփագրով ամրագրված՝ Խարտիայի 4-րդ հոդվածի 4-րդ պարբերության վերաբերյալ եզրակացություններում (143-146) արտացոլված ժամկետները և չափերը:
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՀԱԿՅԱՆ	4. Նախագծի 30-րդ հոդված	4. Առաջարկում եմ Նախագծի 30-րդ	4. Չի ընդունվել, քանի որ Օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-

/047 ընտրատարածք/		հոդվածի 1-ին մասով առաջարկվող Օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի «կամ նրա ներկայացուցիչը» բառերը չհանել, քանի որ հնարավոր են իրավիճակներ, երբ գործատուն օբյեկտիվ անհարաժեշտությամբ պայմանավորված՝ իր իրավունքները հնարավորություն ունենա իրականացնել միայն իր ներկայացուցչի միջոցով, ինչը բխում է նաև Օրենսգիրք 103-րդ հոդված 3-րդ մասից:	ին և 3-րդ մասերով արդեն իսկ սահմանված են, որ գործատուն իր պարտականությունները կատարում և իր իրավունքներն իրականացնում է անձամբ կամ իր ներկայացուցչի միջոցով: Ուստի, ավելորդ կրկնությունից խուսափելու նպատակով՝ Նախագծի 30-րդ հոդվածի 1-ին մասով առաջարկվում է Օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասից հանել «կամ նրա ներկայացուցիչը» բառերը:

Ա. ԱՍԱՏՐՅԱՆ